

Վերապատրաստող կազմակերպություն
«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ

ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԼՔ

Հետազոտության թեման`

Լեզվական կարողունակության ձևավորման մեթոդական
մոտեցումները

Դպրոց – Գյումրու Ակադեմիական վարժարան

Առարկա –անգլերեն

Ուսուցիչ –Չախմախյան Արմինե

Ղեկավար –Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	3
Գլուխ առաջին: Լեզվական կարողունակությունը 21-րդ դարի հմտություն-----	5
Գլուխ երկրորդ: Լեզվական գրագիտությունը և կարողունակությունը: -----	9
Եզրակացություն-----	16
Օգտագործված գրականության ցանկ-----	17

Ներածություն

Օտար լեզուն ոչ հայախոս անձանց հետ շփվելու հիմնական, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթն այլ ժողովուրդներին մատչելի դարձնելու լրացուցիչ միջոց է:

Օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական ունակությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների արժեքների ընկալմանն ու գնահատմանը:

Օտար լեզվի ուսուցման նպատակն է ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու ունակությունները: Ուսումնական այս բնագավառը նպաստում է նաև բնության և ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը: Տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտներն ու ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու և գնահատելու մեր ուղիներն ու հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաներն ուսանողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:

Օտար լեզվի դասավանդման հիմնական խնդիրներից է սովորողի խոսակցական լեզվի, օտար լեզվով միմյանց հետ շփվելու, օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների զարգացումը: Հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները՝ դասավանդողը յուրաքանչյուր դաս պետք է տոնի վերածի: Դրա համար նրան անհրաժեշտ է դասը հագեցնել զանազան, ցանկալի է,

շարժական, խաղերով, այդ թվում դերախաղերով: Դասերին օգտագործվում են տարբեր դիդակտիկ նյութեր՝ խաղալիքներ, ինքնաշեն տիկնիկներ, դիմակներ, նկարներ, նկարքարտեր (այդ ամենը կարող են պատրաստել սովորողները): Խաղերի միջոցով կրկնվում է անցած բառապաշարը, ամրապնդվում նորը: Ջարգանում է երեխաների ուշադրությունը, հետաքրքրությունը:

Բանավոր խոսքի զարգացումը պահանջում է ճիշտ առոգանական հմտությունների ձեռք բերում, որին մեծապես նպաստում են աուդիոդասերը: Այս նպատակին են ծառայում նաև երգերը, ոտանավորները, հանելուկներն ու շուտասելուկները, որոնք և հանդիսանում են առօրյա և ամենօրյա հաղորդակցման, կիրառման, ընկալման և յուրացման միջոց, որոնցով էլ պայմանավորված է մեր կողմից ընտրված թեմայի հրատապությունն ու կարևորությունը:

Թեմայի նպատակը: Տվյալ աշխատանքի նպատակն է հանդիսանում ներկայացնել օտար լեզվի կարևորությունը և դրա հաղորդակցման հնարավորություններն ու ամենօրյա կիրառման միջոցների ամբողջականությունը:

Աշխատանքի նպատակից ելնելով՝ առաջ ենք քաշել հետորյալ խնդիրները.

Ուսումնասիրել օտար լեզվի, մասնավորապես անգլերեն լեզվի հոդորդակցական առանձնահատկությունները, նրա դասավանդման հնարավորությունները.

Ներկայացնել անգլերեն լեզվի հաղորդկանցման միջոցները:

Հետազոտության օբյեկտը: Սույն հետազոտության համար օբյեկտ է հանդիսանում անգլերեն լեզուն և դրա դասավանդման աշխատանքին ուղղված կատարելագործման միջոցառումները:

Հետազոտության առարկան: Հետազոտության համար առարկա են հանդիսացել հաղորդկանցման բոլոր այն մոտեցումները, որոնք կարգավորում են անգլերեն լեզվի դասավանդման գործընթացում դրա յուրահատուկ և առանձնակի մոտեցումները:

Հետազոտության տեսական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են ծառայել արտասահմանյան և հայրենական հեղինակների հրապարակումները, դասավանդողների և ոլորտի մասնագետների կողմից հրապարակված նյութերն ու սովյալները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ առաջին: Լեզվական կարողունակությունը 21-րդ դարի հմտություն

Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ութ կարողունակություններից է լեզվական գրագիտությունը և կարողունակությունը: Հանրակրթական պետական չափորոշչում լեզվական գրագիտությունը և կարողունակությունը ներկայացվում է հետևյալ կերպ. «Մովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Մովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր»:

Հայաստանի Հանրապետության դպրոցներում սովորողների ուսումնառության, տարբեր սոցցանցերում հաղորդակցման մակարդակի, հեռուստատեսության և ԶԼՄ - երի լեզվի վերլուծությունը վկայում է, որ լեզվական գրագիտության խնդիրը օրեցօր ավելի ու ավելի առաջնահերթ է դառնում: Լեզվական գրագիտությունը համապիտանի կարողունակություն է: Այն լիարժեք դրսևորվում է ոչ միայն բոլոր առարկաների ուսումնական գործընթացում, այլև մեր հասարակության բոլոր ոլորտներում: Շատ հաճախ բազմաթիվ թյուրըմբռնումներ են առաջանում լեզվի ոչ գրագետ կիրառության պատճառով: Լեզվական գրագիտությունը պահանջում է և՛ այնպիսի բառապաշար, որ բառիմաստի շփոթություններ չառաջանան, և՛ պատկերավոր խոսքի տիրապետում՝ լսարան գրավելու և խոսքը ճիշտ տեղ հասցնելու համար, և՛ փաստարկված, հիմնավորված դիրքորոշման դրսևորում՝ ասելիքը անառարկելի մատուցելու կամ առողջ քննարկման դնելու նպատակով:

Լեզվական գրագիտության կարողունակության կարևորության շեշտադրումը կնպաստի, որ այն հանրային պահանջարկ դառնա, և ցանկացած ոլորտում անհատի կայացումը կախված լինի նրանից, թե որքանով է տիրապետում իր մայրենի լեզվին: Նման մոտեցումը պիտի ամենուրեք աչքի ընկնի լեզվական գրագիտության և կարողունակություններ ունեցող շրջանավարտներ կրթելու քաղաքականության շարունակական դրսևորումներով:

Այժմ ամենուրեք փնտրված են արհեստավարժ մասնագետները, իսկ արհեստավարժության առաջին ցուցիչը տվյալ ոլորտում կարողունակ լինելն է: Եվ դա ակնառու դրսևորվում է լեզվական գրագիտությամբ: Այն ձևավորվում է տարրական, հիմնական և միջնակարգ կրթության աստիճաններում:

Այսօր լեզուների ուսուցման բնագավառում հատկապես կարևորվում է բազմալեզու կրթությունը մշակույթների երկխոսության համատեքստում: Մի քանի օտար լեզուների իմացությունը, այսինքն՝ բազմալեզվությունը, հասարակության համար ապահովում է արագ ինտեգրում համաշխարհային հանրության քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական տարածքում, իսկ անհատի բազմալեզվությունը հնարավորություն է տալիս անհատին ապահովելու արագ և արդյունավետ ինտեգրում հասարակության մեջ, ծանոթանալու համաշխարհային գիտական, հասարակական, տնտեսական, մշակութային տեղեկատվությանը, ինչպես նաև մեծացնում է ազատ տեղաշարժման իրավունքից օգտվելու գործնական հնարավորությունները:

Ավագ դպրոցում օտար լեզուների ուսուցման գլխավոր առանձնահատկությունը խոսքային գործունեության բոլոր տեսակների ավելի սերտ փոխկապակցված ուսուցումն է, հատկապես ունկնդրման և գրավոր խոսքի դերի բարձրացումը՝ որպես ուսուցման նպատակ և միջոց: Այսօր խիստ կարևորվում է լայն իմաստով ինտեգրումը գիտելիքների ամենատարբեր, ինչպես հումանիտար, այնպես էլ բնագիտական ոլորտների ուսումնական առարկաների միջև, քանի որ լեզուն՝ որպես հաղորդակցության միջոց, ոչ միայն հնարավորություն է ընձեռում ձեռք բերել ամենատարբեր բնագավառներից տեղեկատվություն և գիտելիքներ, այլ նաև նպաստում է սովորողների տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը, ծանոթացնում է

ճանաչողության համապատասխան մեթոդներին:

Օտար լեզուն, լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը և այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցելու միջոց, նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, ժողովուրդների փոխըմբռնմանը և միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանն ու փոխհարստացմանը: Օտար լեզուներին տիրապետելը բարձրացնում է դպրոցականների հումանիտար կրթության մակարդակը, նպաստում է անհատականության ձևավորմանն ու սոցիալացմանը բազմամշակութային ու բազմալեզու աշխարհի հարափոփոխ պայմաններում:

Օտար լեզուներն ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում են հաղորդակցական և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանն ու գիտակցմանը՝ բանասիրական իրազեկության ընդլայնման առումով, ինչպես նաև աջակցում են սովորողի ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը: Հենց սրանում է դրսևորվում լեզվական ուսումնական առարկաների փոխազդեցությունը, ինչը նպաստում է դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձևավորմանը:

Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև այլ առարկաներից, օրինակ՝ աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը:

Օտար լեզուների իմացությունն ընձեռում է նաև տեղեկատվության գոյություն ունեցող անսպառ աղբյուրներից օգտվելու լայն հնարավորություններ (մասնագիտական և տեղեկատվական գրականություն, ինտերնետ և այլն):

Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում է այս կամ այն խոսք ային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է նաև անձնավորության արժեքային՝ կողմնորոշիչների՝ հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է մարդկանց վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորվում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով:

Այսպիսով՝ օտար լեզուն՝ որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական

կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Սովորելով օտար լեզու՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բնասսիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն: Ժամանակակից լեզվական կրթության և օտար լեզուների ուսուցման առանձնահատկություններն են.

- Միջմշակութայնություն. օտար լեզուն լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրն է, ուստի դրա ուսումնասիրությունը նպաստում է ժողովուրդների փոխըմբռնմանը, միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանն ու փոխհարստացմանը:

- Դպրոցականների հաղորդակցական և հանրամշակութային իրազեկության զարգացումը հնարավորություն է տալիս նրանց իրավահավասար գործընկեր լինել օտար լեզվով միջմշակութային հաղորդակցության գործընթացում:

- Միջառարկայականություն. օտար լեզվով խոսքի բովանդակությունը կարող է պարունակել տվյալներ գիտելիքների ամենատարբեր բնագավառներից (գրականություն, արվեստ, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկական այլն), ինչն առավելագույնս մեծացնում է օտար լեզուների իմացության արժեքը՝ որպես տեղեկատվության ստացման, փոխանակման ու հաղորդակցության միջոց:

- Միջառարկայական ինտեգրում. օտար լեզվի և մյուս առարկաների ինտեգրումը և միջառարկայական կապերը նպաստում են երեխաների կողմից աշխարհի ու երևույթների միասնական, ամբողջական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի ու գաղափարների համադրմանը, իմաստավորմանն ու գնահատմանը, ինչը խթանիչ գործոն սովորողների ճանաչողական, ստեղծագործական գործունեության համար:

Բազմամակարդակություն. մի կողմից լեզվական տարբեր միջոցների տիրապետման անհրաժեշտություն, մյուս կողմից՝ հաղորդակցական կարողությունների (ունկնդրել, խոսել, կարդալ և գրել) ձևավորում, ավելին՝ օտար լեզվի օգտագործումով որևէ հանրօգուտ գործունեության ծավալում (օրինակ՝

նախագծային աշխատանք, համայնքային ծառայություն կամ ծառայության միջոցով ուսումնառություն):

- Բազմագործառնություն. կարող է հանդես գալ ն՛ որպես ուսուցման նպատակ, ն՛ որպես միջոց՝ գիտելիքների տարբեր բնագավառներից տեղեկություններ քաղելու համար:

- Բազմագործառնություն. կարող է հանդես գալ ն՛ որպես ուսուցման նպատակ, ն՛ որպես միջոց՝ գիտելիքների տարբեր բնագավառներից տեղեկություններ քաղելու համար:

Գլուխ երկրորդ: Լեզվական կարողունակության ձևավորման մեթոդական մոտեցումները

Լեզվական կարողունակության ձևավորումը հանրակրթական ծրագրի տարրական, հիմնական և միջնակարգ աստիճաններում առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ մեթոդական մոտեցումներով: Ցանկալի է, որ տարրական դպրոցում սովորողը աշխարհն ընկալի զգայարաններով, ուստի ուսուցումը ևս պիտի կազմակերպվի՝ զգայարանների վրա հենվելով, դրանք զարգացնելով և նրանց միջև եղած կապերն ամրապնդելով: Իսկ դրա ամենաարդյունավետ ճանապարհը խաղի վրա հիմնված կրթությունն է, որին մասնակից են բոլոր զգայարանները:

Եթե մանկավարժական հոգեբանության մեջ երեխայի կյանքի առաջին յոթամյակը բնութագրվում է իբրև զգայարանների և ընկալումների ձևավորման ու զարգացման փուլ, և ուսումնական գործունեությունը ցանկալի է կազմակերպել դրանց շեշտադրմամբ և առաջնահերթությամբ, ապա 10-14 տարեկանում դրանք պիտի շարունակեն զարգանալ գիտելիքին գուգահեռ:

Օտար լեզվի միջոցով սովորողների ուսուցումը, դաստիարակությունը և զարգացումը պետք է ընթանան անձնակենտրոն, գործունեության վրա հիմնված, հաղորդակցական-ճանաչողական մոտեցումների իրագործմամբ: Այսինքն՝ մանկավարժական գործընթացի կենտրոնում աշակերտն է՝ իր հնարավորություններով, պահանջումներով, տարիքային և անհատական առանձնահատկություններով, ձեռքբերումներով ու դժվարություններով, որոնք պետք է գիտակցի ուսուցիչը՝ դրսևորելով հանդուրժողական վերաբերմունք սովորողների նկատմամբ: Ուսանելով օտար լեզուներ՝ աշակերտները ձեռք են բերում այդ լեզվով շփման և հաղորդակցման կարողություն, որը ձևավորվում է ուսուցչի, մյուս աշակերտների և այլ անձանց հետ ակտիվ փոխներգործուն (ինտերակտիվ) համագործակցության ընթացքում:

Հանրակրթական դպրոցում օտար լեզվի ուսուցումը պետք է հիմնված լինի լայն հանրամշակութային համատեքստի վրա, ինչպես նաև ուղղված լինի ուսուցման հաղորդակցական նպատակի իրագործմանը: Այդ նպատակն ապահովում է իրական գործնական արդյունք, այն է՝ օտար լեզվով

հաղորդակցության հիմքերի ստեղծում, անձի հոգևոր և մտավոր զարգացում: Օտար լեզուների ուսումնասիրության արդյունքում սովորողների գիտակցության մեջ տեղի ունեցող տարբեր լեզվական համակարգերի փոխներգործության և համեմատության հիման վրա ձևավորվում և զարգանում են ընդհանուր խոսքային կարողությունները, լեզվամտածողությունը և, ընդհանուր առմամբ, բարեկիրթ շփման կարողությունները: Ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը օտար լեզուների ուսուցման պարագայում ուղղված է հաղորդակցական իրազեկության ձևավորմանը, որը դիտարկվում է որպես օտար լեզուների ուսուցման/ուսումնառության գլխավոր նպատակ և իրականացվում է հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում (տարրական, միջին և ավագ): Խոսքային գործունեության բոլոր ձևերը փոխկապակցված, փոխապայմանավորված են, ուստի դրանց ուսուցումը պետք է իրականացվի փոխադարձ կապի մեջ. մի կողմից՝ համաձայնեցված, մյուս կողմից՝ տարբերակված մոտեցում ցուցաբերելով դրանցից յուրաքանչյուրի ձևավորմանը: Նման մոտեցումն ապահովվում է նրանով, որ այն, ինչը սկզբում յուրացվում է բանավոր, այնուհետև ամրապնդվում է գրելու և կարդալու միջոցով: Տարբերակված մոտեցումն իր դրսևորումն է գտնում վերարտադրողական և ընկալողական յուրացման համար նյութի ընտրության, ուսումնական տարբեր խնդիրների առաջադրման, խոսքային գործունեության յուրաքանչյուր տեսակի համար տարբեր հնարների կիրառման, յուրաքանչյուրի համար նախատեսված որոշակի առաջադրանքների, ինչպես նաև սովորողների գիտելիքների ու կարողությունների մակարդակը հաշվի առնող մոտեցման մեջ: Լեզվական և խոսքային նյութի ընտրությունն ու կազմակերպումը, ինչպես նաև կարողությունների ու հմտությունների ձևավորումը պետք է իրականացվի կառուցվածքային-գործառութային՝ մոտեցման և մոդելավորման հիման վրա: Ելնելով խոսողի նպատակից (ինչ-որ բան հարցնել, հաղորդել, խնդրել, անվանել առարկան, նրա որակը կամ գործողությունը և այլն), որը պայմանավորված է հաղորդակցական խնդրի բնույթով, ինչպես նաև հենվելով այս կամ այն տիպի նախադասության էական կառուցվածքային ցուցանիշների վրա՝ աշակերտները սովորում են ճիշտ կառուցել նախադասությունները: Կառուցվածքային-գործառութային մոտեցման և

մոդելավորման մեթոդն իր արտացոլումն է գտել նաև խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցման ժամանակ. օրինակ՝ երկխոսության (երկխոսություն–հարցում, երկխոսություն–կարծիքների փոխանակում, առօրյա բարեկիրթ երկխոսություն և այլն) և մենախոսության տարբեր տիպերը (նկարագրում, հաղորդում, բնութագրում, կշռադատում և այլն) ուսուցանելիս: Ուսուցիչ–աշակերտ համագործակցության և ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման ողջ համակարգը պետք է ապահովվի ուսումնական առաջադրանքներով և ռազմավարություններով: Ուսուցչի և աշակերտի փոխներգործությունը ըստ էության ապահովվում է վարժությունների և առաջադրանքների միջոցով: Խոսքային գործունեության յուրաքանչյուր ձևին պետք է համապատասխանեն յուրահատուկ առաջադրանքներ և վարժություններ: Բոլոր առաջադրանքների համար ընդհանուր է այն, որ դրանք պետք է հնարավորինս մեծ հաղորդակցական ուղղվածություն ունենան: Ուսումնական գործընթացի կազմակերպումը պետք է ապահովի ուսումնառության դրդապատճառների ձևավորումը: Հայտնի է, որ ուսումնական դրական դրդապատճառները մեծապես խթանում են սովորողի հետաքրքրությունների, լեզվամտածողության, ինչպես նաև ճանաչողական և ստեղծագործական կարողությունների զարգացումը, ինչպես նաև նպաստում են ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Դրան հնարավոր է հասնել անհատական մոտեցմամբ, ֆրոնտալ, գույգերով և խմբային աշխատանքների, ինչպես նաև խաղային մեթոդների համակցմամբ: Այս պարագայում հատուկ նշանակություն են ստանում նախագծային մեթոդի, տեսալսողական միջոցների, պրոբլեմային ուսուցման տարրերի կիրառումը: Դրանց շնորհիվ հնարավոր է հաղթահարել դպրոցական պայմաններում լեզվական բնական մթնոլորտի բացակայության դժվարությունները: Տեքստերը պետք է հազեցված լինեն սովորողների մակարդակին ու հետաքրքրություններին համապատասխան երկրագիտական, հանրամշակութային տեղեկություններով: Ինչպես նշեցինք, հաղորդակցական իրազեկությունը ենթադրում է ոչ միայն լեզվական միջոցների յուրացում, այլ նաև դպրոցականների հաղորդակցում լեզվակիր ժողովրդի մշակույթին: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են իրական բնագիր նյութերի ստեղծումն ու օգտագործումը: Անցումը դեպի

հետարդյունաբերական, տեղեկատվական, ինտեգրացված հասարակություն պահանջում է անհատի բազմակողմանի, ամբողջական զարգացում՝ ներառյալ հաղորդակցական ընդունակությունները, որոնք դյուրացնում են նրա մուտքը համաշխարհային հանրություն և արդյունավետ գործելու հնարավորություն են ընձեռում: Ինչպես նշվեց, հասարակության հումանացման և ժողովրդավարացման սկզբունքներին համապատասխան հռչակվել է կրթության նոր՝ անձնակենտրոն հարացույց, որը որպես կրթության հիմնական նպատակ է դիտարկում ազատ, կրթված ու զարգացած անձի ձևավորումը, որն ունակ է ապրել ու ստեղծագործել հարափոփոխ աշխարհի պայմաններում: Ուսումնական առարկայի հիմնական խնդիրն իր մարմնավորումն է գտնում ուսուցման հաղորդակցական նպատակում, որը ենթադրում է սովորեցնել հաղորդակցվել օտար լեզվով: Ինչպես նշվում է «Միջնակարգ կրթության պետական չափորոշչում», օտար լեզուն ոչ հայախոս անձանց հետ շփվելու հիմնական, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթը այլ ժողովուրդներին մատչելի դարձնելու լրացուցիչ միջոց է: Յոթերորդ դասարանից սկսվում է Մայրենիի տրոհումը. այն ուսուցանվում է առանձին առարկաների տեսքով՝ Հայոց լեզու և Գրականություն: Առաջին դասարանից Մայրենին մեկ առարկա ընկալած սովորողի համար բավականին դժվար է երկու նոր, տարբեր առարկաների ուսուցումը: 7-րդ դասարանցին բոլորովին նոր տարիքային խումբ է և աչքի է ընկնում ֆիզիկական և հոգեբանական ընդգծված առանձնահատկություններով: Բայց միաժամանակ սա այն տարիքն է, երբ երեխան պատրաստ է մտածական գործունեության համար, նա կարող է ընդգրկել մտածողական ավելի մեծ տեսադաշտ, ինքնուրույն դատողություններ անել, վերլուծել և համադրել ստացած գիտելիքները: Մտածական ճիշտ գործունեություն չձավալելու դեպքում կգրկենք երեխային մտածելով աշխատելու բացառիկ հնարավորությունից:

Միջնակարգ կրթության աստիճանում չանտեսելով տարիքային առանձնահատկությունները՝ կարևոր է զարգացնել քննական մտածողությունը, որովհետև այս տարիքում դեռահասը սիրում է ամեն ինչին քննադատաբար վերաբերվել, և դասաժամին նրան տրվում է այդ հնարավորությունը, գիտական

աշխարհը նոր-նոր է բացահայտվում նրա համար, և հարցերով բացահայտելու հնարավորությունը հասկացման լավագույն ճանապարհներից է, այս տարիքը մեծ պահանջ ունի շփման, և խմբերով աշխատանքը, որտեղ ոչ թե նա պարզապես պնդում է իրենը, այլ լսում է դիմացինի կարծիքը, հակափաստարկներ է հավաքում, համոզում և փաստերով հիմնավորում է իր իմացածն ու հասկացածը:

Եզրակացություն

Այսպիսով, սույն հետազոտական աշխատանքի արդյունքում մենք պարզեցինք, որ օտար լեզվի ուսուցման նպատակն է ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու ունակությունները: Ուսումնական այս բնագավառը նպաստում է նաև բնության և ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը:

Օտար լեզվով հաղորդակցվելու և դրա գնահատման հիմնական նպատակներ են սովորողների գիտելիքների մակարդակի, կարողությունների և հմտությունների տիրապետման ստուգումը, ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ուսումնական որակի բացահայտումն ու վերահսկումը:

Պարզեցինք, որ կիսամյակային գնահատականները դրվում են կիսամյակային ստուգատեսներին, ուսումնա-հետազոտական ճամբարներին, կրթահամալիրային օլիմպիադաներին մասնակցության արդյունքում, ինչպես նաև տարվա ընթացքում կատարած հետազոտական աշխատանքների հիման վրա: Գնահատականի գոյացման բաղկացուցիչ են հանդիսանում բանավոր պատասխանները, ընթացիկ գրավոր աշխատանքները, կիսամյակային ամփոփիչ ստուգարքերը: Գործնական աշխատանքի գնահատումը իրականացվում է ստուգատեսներին ներկայացված նյութերի հիման վրա:

Հասկացանք, որ գնահատելիս հաշվի են առնվում սովորողների մասնակցությունը կրթահամալիրային միջոցառումներին (հոկտեմբերյան և մայիսյան բաց փորձաքննություններ, Հանրակրթական Դիջիթեք, «Ժանգոտ դդում» և Ռոք փառատոն, և այլն): Այս ստուգատեսներին սովորողները անհատապես կամ խմբային, դասավանդողի ղեկավարությամբ, ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները օտար լեզվով: Կարող են ներկայացվել նաև ընթացիկ աշխատանքները, որոնք նախկինում տեղադրվել են Կրթահամալիրի կայքում (թարգմանություններ, ուսումնական առաջադրանքներ և այլն): Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ծնողին էլեկտրոնային և թղթային

տարբերակով ներկայացվում են սովորողի ամփոփաթերթիկները, որտեղ ներառված են նրա գործունեության բոլոր ոլորտները:

Այսպիսով, իմացան, որ լեզու դասավանդողի կարևորագույն խնդիրներից են՝ ապահովել ուսուցման որակական նոր մակարդակ և գործնական ուղղվածություն, բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը:

Այդ տեսանկյունից կարևորում ենք առարկայական մեթոդավորման աշխատանքը, որը կոչված է կատարելագործելու դասավանդման որակը՝ ապահովելու նոր մեթոդական ձևեր ու միջոցներ, ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման համար ստեղծել պայմաններ, օգտագործել ռուսաց լեզվի դասերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման համար և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. <https://elearning.kasa.am/mod/book/view.php?id=7647&chapterid=478>
2. Աստվածատրյան Մ.Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Եր., 1985.
3. Պետրոսյան Գ. Երկլեզվության հոգեկեզվաբանական և հանրակեզվաբանական հայեցակարգեր, ԵՊՀ, 1998.
4. Օտար լեզուների առարկայական ծրագիր, գլուխ XXIV. www.mes.gov.ge/uploads. gegmobi/4.doc
5. Будагов Р. А. Введение в науку о языке. / 3-е изд. М.: Добросвет-2000, 2013.

